

պինդ կապել: Կտաւի վրայ դնել նաեւ բարակ շերտերով տախտակներ եւ նորից կապել: Ապա ձեռքը կրծքին դնել եւ թաշ-կինակով վզից կապել: Հիւանդը 15 օր պէտք է իւղալից կերակուրներ ուտի, իսկ սառը ջուր երբեք պիտի չլիմի: Նոյնպէս աթթարից դնել 2-3 հատ զօրսը քամար, կճեպը մաքրել եւ կորեղը խառնել բրուշ-տուքի մէջ եւ կերցնել հիւանդին:

Կողքի կտորած ոսկորներ

Եթէ կողքի ոսկորները վնասուեն, օդին տաքացնել եւ ծեծած խուկի հետ խառնելով քսել մի կտաւի վրայ: Ապա հիւանդին տալ մի դատարկ շիշ եւ պատուիրել, որ ուժեղ փչէ: Կտորած ոսկորները շիշը փը-չելիս դասաւորւում են իրենց տեղը: Այդ ժամանակ կտաւը կպցնել կոտորուած ոսկորի վրայ: Կտաւը չպոկել, մինչեւ լաւանալը:

* * *

Ահա սրանք են Չարմահալի ժողովրդ-դական բժշկութեան գիտելիքներն ու դե-դատումները, որոնց դարերի ընթացքում

դեղջուկները միտքն ու իմաստութիւնը զործադրել են զանազան հիւանդութիւն-ները համար:

Հիւանդների բժշկութեան համար ժո-ղովրդական այդ գիտելիքները, բացի զործնական խոշոր նշանակութիւնից, ներկայացնում են նաեւ պատմական ար-ժէք այն տեսակէտից, որ ժողովրդական բժշկութեան մէջ զործնական դեղա-տոմսերը, որոնք տասնեակ սերունդների փորձառութեան բովից են անցել, հայ գիւղացիները 1605 թուին, Շահ-Արքաւ Մեծի բռնի պաղթի ժամանակ, Հայաս-տանից իրենց հետ բերել են Իրան եւ նոր միջավայրում օգտուելով լեռնային, դաշ-տային բոյսերից, խոտերից ու արմատնե-րից, աւելի զարգացրել եւ հարստացրել են բժշկական գիտութեան գանձարանը:

Անհրաժեշտ է միայն, որ հայ մասնա-դէտ բժիշկներն ուշադիր ուսումնասիրու-թեան ենթարկեն այդ գիտելիքներն ու դեղատոմսերը եւ օգտագործեն բժշկա-կան գիտութեան մէջ:

(Վերջ)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ԲԱՆԱԳՈՂ ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐ ՄԸ

Տարիներ առաջ, առիթը ունեցած էինք, «Բազմալեզու»-ի էջերուն մէջ, «Բանագող վկայասան մը» (Բազմ. Նոյ-Դեկտ. 1953, էջ 226) եւ «Երեսփոխան բանագող մը» (Բազմ. Յուլիս-Օգոստոս 1957, էջ 170) խորագիրները կրող յօդուածներով, եր-կու բանագողեր երեւան հանելու:

Ահա ուրիշ մը եւս, որ յօդուածի մը բանագողն է:

Անցեալ տարի, տաղանդաւոր գիւղա-գիր Համաստեղի ծննդեան 70ամեակը եւ զրական գործունէութեան ալ 50ամեակն էր:

Ամբողջ Հայութիւնը, անխտիր, փու-թաց յարգանքի տուրքը վճարելու իր պանծալի մէկ զաւակին, որ, աւա՛ղ յո-րէկինական հանգէսի մը ընթացքին, իրեն հանգէպ ցոյց տրուած ժողովրդական խանդավառ համակրանքին եւ զնահա-տանքին համար շնորհակալութեան խօս-քը արտասանելու միջոց, կ'իյնար բեմին վրայ, փառատօնը սգատօնի փոխելով:

Լրագիրները եւ թերթերն ալ իրենց թանկագին բաժինը բերին մեծարանքի այս ցոյցերուն:

Նիւ Եորքի մէջ հրատարակուող «Կիւլի-կիա» պարբերաթերթին մէջ, սակայն, Համաստեղի նուիրուած յօդուած մը, որ «Գիւղը Համաստեղի պատմութեան քննարկն է» վերնագիրը կը կրէ, զրեթէ ծայրէ

ծայր, շատ աննշան փոփոխութիւններով, օրինակութիւնն է Ռ. Դարբինեանի յօդ-ուածին, որ 1924ին՝ «Հայրենիք» ամսա-գրին մէջ լոյս տեսած եւ 1966ի «Բազին»-ի՝ Համաստեղին նուիրուած բացառիկին մէջ արտատպուած է:

Բանագողը՝ Զ. Ք. Մ. ստորագրութեան ներքեւ ծուարելով, փորձած է ուրիշի փետուրներով զարդարուիլ:

Փոխանակ քիչ մը յոգնելու եւ Համաս-տեղի գործերը երկար բարակ ուսումնա-սիրելու, մեր բանագողը՝ յօդուած գրե-լու դիւրին ճամբան գտած է: Ուրիշի պա-տրաստած ապուրը, առանց նոյնիսկ տաք-ցնելու, առանց իր կողմէ մեծ բան մը աւելցնելու վրան, զրեթէ նոյնութեամբ, կը հրամցնէ ընթերցող հասարակութեան:

Գողերը, երբ օձիքնին վրայ տալու ըլ-լան, իրենց յանցանքին ծանրութեան հա-մաձայն, պատիժի կ'ենթարկուին: Բա-նագողները, սակայն, կը մնան անպա-տիժ:

Չանոնք հրապարակաւ խայտառակե-լով, կը կարծենք արդար գործ մը կա-տարած ըլլալ, զգուշացնելու համար նա-եւ ուրիշները նման նուաստացուցիչ սը-խրագործութիւններէ:

Վարը, գիւմացի գիւմաց կը զնենք, Ռ. Դարբինեանի յօդուածէն օրինակուած մա-սերը եւ բանագողին գրութիւնը:

«Բազմալեզու», Ե. տարի, 1966, թիվ 1, էջ 3
Հ Ա Մ Ա Ս Տ Ե Ղ

Ռ. ԴԱՐԲԻՆԵԱՆ

Համաստեղ լուս գիտող է եւ նկարիչ իր ստեղծագործություններում մէջ. նկարչական միջոցներով նույնիսկ ան կը վերարտադրէ իր հերոսներուն բընութիւնը, հոգեբանական ապրումները. երեւոյթներու արտաքին կողմի օգնութեամբ կը սիրէ զրոյսները անոնց ներքինը: Այդ պատճառով ալ Համաստեղ կը խուսափի երկարաշունչ ու մանրակրկիտ հոգեբանական վերլուծումներէ, որոնց աշխարհ մեծ սիրահարն է, օրինակ, աիւ. Չապէլ Եսայան, այլ կը բաւականանայ քանի մը բնորոշ դժերով, զոյններով եւ սրամիտ ու պատկերաւոր համեմատութիւններով, որոնց հիման վրայ կուսէ կու տայ իր հերոսներու նկարագիրը, բնութագիրը, ներքին կեանքն ու ապրումները:

Աւելի եւս բնորոշելու համար մեր երիտասարդ հեղինակի ստեղծագործութիւնը, պիտի ըսենք, որ Համաստեղ նկարչական միջոցներէ դատ կ'օգտուի տոմարաթիւ Էֆֆէքթներով, ողբերգական հակադրութիւններով եւ բախումներով...: Ուրիշ խօսքով, Համաստեղ կը շարժի ոչ որպէս պարզ վիպագիր, հոգեբան կամ բանաստեղծ, այլ որպէս թատերագիր. այսինքն՝ գործողութեան միջոցով է որ ան ճանչցնել կու տայ իր հերոսները եւ ոչ սոսկ նկարագրութեամբ, վերլուծումով կամ քննարկական զեղումով:

Միակ պատմութեան է թերեւս, ուր երիտասարդ հեղինակին դաւաճանք է չափի իր բնածին զգացումը եւ բնականի, իրականի իր սուր հոտառութիւնը: Համաստեղ մտեր է չափազանցութիւններու մէջ եւ իր գլխաւոր «հերոսը»՝ Վարդանը աշխարհ խեղճ ներկայացուցեր, որ միայն դաւելտի մէջ ներկելի գոհելի եւ վրան-բաց խարերատի մէջ զոհ է դարձուցեր:

... իր նիւթերու մեծագոյն մասը Համաստեղ կը վերցնէ երկրէն, հայրենի գիւղի հարազատ միջավայրէն եւ կամ ամերիկահայ զաւթութի կեանքէն: Իր ստեղծագործ երեւակայութիւնը շարունակ կը յաճի հայրենի լեռներու եւ դաշտերու մէջ, աւանդմէ քաղելով իր գեղեցիկ ներշնչումները: Անգամ Ամերիկայի մէջ Համաստեղ հայ հայրենիքն է որ կը փնտռէ...:

... ինչ որ ամէնէն գնահատելին է եւ միեւնոյն աւան դարձանալին, արտակարգ բնական խտացում մը կայ Համաստեղի ոճի եւ պատկերներու մէջ,

«Արիւնիկա», 1966 Դեկտ. էջ 29
ԳԻՒՂԸ ՀԱՄԱՍՏԵՂԻ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Զ. Ք. Մ.

Նկարիչի աչք: ... Ան լուս գիտող է եւ նկարիչ իր ստեղծագործություններում մէջ, նկարչական միջոցներով նույնիսկ ան կը վերարտադրէ իր հերոսներուն բնութիւնը, հոգեբանական ապրումները, երեւոյթներու արտաքին կողմի օգնութեամբ ան կը սիրէ ի յայտ բերել անոնց ներքինը: Կը խուսափի մանրակրկիտ հոգեբանական վերլուծումներէ, եւ կը բաւականայ (ուղղէ բաւականանայ) քանի մը բնորոշ դժերով, սրամիտ ու պատկերաւոր համեմատութիւններով, որոնց հիման վրայ կուսէ կու տայ իր հերոսներուն նկարագիրը, բնութիւնը, ներքին կեանքն ու ապրումները...:

Աւելի եւս բնորոշելու համար հեղինակին աչքի տեսողութիւնը, պիտի ըսենք թէ Համաստեղ նկարչական միջոցներէ դատ կ'օգտուի ողբերգական համադրութիւններէ եւ բախումներէ: Ուրիշ խօսքով, ան կը շարժի ոչ որպէս պարզ վիպագիր, հոգեբան կամ բանաստեղծ, այլ որպէս թատերագիր. այսինքն՝ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ միջոցով է որ ան կը ճանչցնէ իր հերոսները եւ ոչ սոսկ նկարագրութեամբ, վերլուծումով կամ քննարկական զեղումով:

Միակ բացատրութիւնը «Վարդանը» վերնագրով պատմութեան է, ուր հեղինակը կը դաւաճանէ, իր բնածին զգացումին եւ բնականի, իրականի իր սուր հոտառութեանը: Ան մտեր է չափազանցութիւններու մէջ եւ իր գլխաւոր հերոսը, «Վարդանը» աշխարհ խեղճ ներկայացուցեր, որ միայն դաւելտի մէջ ներկելի է:

Համաստեղ իր նիւթերուն մեծագոյն մասը կը վերցնէ երկրէն, հայրենի գիւղի հարազատ միջավայրէն: Իր ստեղծագործ երեւակայութիւնը շարունակ կը յաճի հայրենի լեռներու եւ դաշտերու մէջ, աւանդմէ քաղելով իր գեղեցիկ ներշնչումները: Անգամ Ամերիկայի մէջ Համաստեղ կը փնտռէ իր հայրենի հողը...:

Համաստեղի մէջ ամէնէն գնահատելի բանը իր ոճին ու պատկերներուն խիստ խտացած բլրալն է. կարծես մէկ անգամէն, առանց որեւէ աշխատանքի,

կարծես մէկ անգամէն, առանց որեւէ աշխատանքի, անոնք դուրս են եկել վարպետի դրէի տակէն: Անգամ իր ուսուցիչ Չարգարեանի պատմութեամբ ներու մէջ կարելի է յստակօրէն տեսնել երբեմն արուեստագէտի կողմէ եղած ճիշդի եւ փնտառութի հետքերը, որոնք սակայն կը բացակային Համաստեղի մօտ:

... պատկերաւոր պարզութիւն. անհատաւորի է ուղղակի, որ «Շէն գիւղի հին օրերէն» իման զբոսաւոր մը կրնայ սկսնակի մը առաջին գործը լինել:

Հայ գիւղական կեանքի անպաճոյճ, թարմ ու կենդանի պատկերներ կու տայ երիտասարդ հեղինակը իր այս անգամիկ պատմութեան մէջ: Մանկական անհոգ օրերու յիշողութիւններ են ձեր առջեւ՝ խորունկ թախիծով մը ներշնչուած, — յիշողութիւններ, որոնց մէջէն քանի մը թեթեւ լայց գունդակը զձերով կը նկարուի ձեր առջեւ հայրենի գիւղը իր շէն օրերուն, իր երանելի անհոգութեան ու միամտութեան մէջ...:

Գիւղը ինքն է որ հազարաւոր տարիներու կնիքը կրող իր նախնական հոգեբանութեան հակադրութիւններով կը մերկանայ ընթերցողին առջեւ...

...նոր անկիւնէ մը կը ցուցադրեն աշխարհը, ինքնայատուկ լոյս մը կը սփռեն իրերու եւ մարմնի վրայ, նոր եղանակով մը կը ներթափանցեն ու կ'ընդգրկեն կեանքի խորհուրդներն ու զաղտուիքները, որով միշտ նոր բան մը կ'աւելնայ մինչ այդ մեր զգացած, տեսած եւ խորհած բաներու պաշարի վրայ, միշտ իրականութեան նոր ծալք մը կը բացուի մեր առջեւ: ...

Փոքրիկ հոգեբանական էրիւղ մըն է «Ներքէլ Այն (Որեւոր)» պատմութեամբ... որ անհատական զգրկութեան մը անձուկ շրջանակէն դուրս դալով կը խտանայ մեր ազգային ամբողջ դժբախտութիւնը ներկայացնող փոքրիկ պատկերի մը մէջ:

«Նապաստակի մը Օրագիրը» համարձակ փորձ մըն է նապաստակի մը անկիւնէն դիտելու եւ դնահատելու աշխարհը: Բայց աւելի աշխարհական զրուածք մըն է, որ մարդկային կերպարանքով նապաստակներու հոգին կը ներկայացնէ սրամիտ պատկերներով եւ համեմատութիւններով:

Համաստեղի հերոսները գրեթէ միշտ թշուառներն են, կեանքին մերժումները, հասարակութենէն եւ նոյնիսկ բնութենէն հալածումներ, որոնց դժբախտութեան պատճառը ոչ թէ իրենց չարութիւնն է կամ ոճրային մղումները, այլ, ընդհակառակն, մեծ մասամբ իրենց ծայրահեղ

դուրս եկած: Չարգարեանի մօտ կը տեսնենք երբեմն իր կողմէ եղած ճիշդի եւ փնտառութի հետքեր, մինչ Համաստեղի մօտ կը բացակային:

Համաստեղի պատկերաւոր պարզութիւնը ի յայտ կու գայ առաջին գործին, «Շէն գիւղի հին օրերէն» վերնագրով պատմութեան մէջ: Անհատաւորի է թէ այսպիսի զրուածք մը սկսնակի մը առաջին գործն եղած բլրալն:

Հայ գիւղական կեանքի անպաճոյճ, թարմ ու կենդանի պատկերներ կու տայ երիտասարդ հեղինակը իր այս անգամիկ պատմութեան մէջ: Մանկական անհոգ օրերու յիշողութիւններ են ձեր առջեւ՝ խորունկ թախիծով մը ներշնչուած, — յիշողութիւններ, որոնց մէջէն քանի մը թեթեւ լայց գունդակը զձերով կը նկարուի ձեր առջեւ հայրենի գիւղը իր շէն օրերուն, իր երանելի անհոգութեան եւ միամտութեան մէջ...:

Գիւղը ինքն է որ հազարաւոր տարիներու կնիքը կրող իր նախնական հոգեբանութեան հակադրութիւններով կը մերկանայ ընթերցողին առջեւ:

Ան նոր անկիւնէ մըն է որ կը ցուցադրէ աշխարհը, գիւղը եւ բնակչութիւնը, որոնք միշտ երբեմն շատերու կողմէ. ինքնայատուկ լոյս մը կը սփռեն իրերուն եւ մարդոց վրայ, նոր եղանակով մը կը ներթափանցեն ու կ'ընդգրկեն կեանքի խորհուրդները ու զաղտուիքները, որով միշտ նոր բան կ'աւելնայ մինչ այդ մեր զգացած, տեսած եւ խորհած բաներուն պաշարին վրայ, միշտ իրականութեան նոր ծալք մը կը բացուի մեր առջեւ: ...

Հոգեբանական ուրիշ կտոր մըն է նաեւ «Ներքէլ այն օրերուն» պատմութեամբ, որ անհատական զգրկութեան մը անձուկ շրջանակէն դուրս դալով կը խտանայ մեր ազգային ամբողջ դժբախտութիւնը ներկայացնող փոքրիկ պատկերի մը մէջ:

«Նապաստակի օրագիրը» համարձակ փորձ մըն է նապաստակի մը անկիւնէն դիտելու եւ դնահատելու աշխարհը: Բայց աւելի աշխարհական զրուածք մըն է, որ մարդկային կերպարանքով նապաստակներու հոգին կը ներկայացնէ սրամիտ պատկերներով եւ համեմատութիւններով:

Անոր հերոսները միշտ թշուառներն են, կեանքին մերժումները, հասարակութենէն եւ նոյնիսկ բնութենէն հալածումներ, որոնց դժբախտութեան պատճառը ոչ թէ իրենց չարութիւնն է կամ ոճրային մղումները, այլ, ընդհակառակն, մեծ մասամբ իրենց ծայրահեղ

յեղ բարութիւնը, հեղութիւնը, բանաստեղծական հակումներն ու բարոյական առաքինութիւնները: Համաստեղի կերտած հոգիներու մէջ խորը թաքնուած են բարոյական կամ գեղագիտական (էսթետիկ) ձգտումներ:

Իրենց ընտանեկան կամ ընկերային դիրքով Համաստեղի հերոսները կեանքի ամենաստորին ատիճաններու վրայ կը գտնուին դրեթէ միշտ, բայց իրենց հոգեկան թռիչքներով, անսովոր յայդերով եւ որոնումներով անոնք բարձր են իրենց չորջապատէն:

Ամէն մէկ գեղարուեստագէտ ի վերջոյ իր անհատականութիւնն է որ կը գրսեւորէ իր երկերուն մէջ: Ստեղծագործել՝ կը նշանակէ իր հոգիէն կտոր մը վերցնել եւ գեղարուեստորէն մարմնաւորել զայն այս կամ այն արտաքին միջոցով: Նոյնիսկ այն պարագային, երբ գեղարուեստագէտը իրեն նիւթ կ'ընտրէ հեռուոր առարկաներ, որոնք, ըստ երեւոյթին, անմիջական առնչութիւն չունին իր հոգիին հետ, այսուհանդերձ անոնք զօրապէս կը կրեն կերտողի անձնաւորութեան յատկանշական դրոշմը, թէկուզ իրենց ձեւով, ոճով, լուսարանութեամբ եւ շունչով:

Համաստեղի ստեղծագործութեան մէջ, հակառակ իր առարկայական (օբժեկտիվ) նիւթին ու ձեւին, շատ ուժեղ ենթակայական (սուբժեկտիվ) շեշտ կայ: Համաստեղի նկարագրած դէմքերն ու իրերը ոչ միայն իրրեւ թիփեր հոգեպէս հարազատ են իրեն, այլեւ հարազատօրէն կը ներկայացնեն իր աշխարհայեցողութիւնն ու աշխարհազգացողութիւնը: ... Եւ որքան աւելի զօրեղ են անհատականութիւնն ու տաղանդը գեղարուեստագէտին մէջ, այնքան աւելի յստակ եւ իւրայատուկ կերպով կը վերարտադրուին իրերն ու երեւոյթները անոր երկերուն մէջ:

Ամէն օր մենք անտարբերօրէն կ'անցնինք շատ սովորական թուող մարդոց եւ իրերու մօտէն, որոնք յուզիչ, յաճախ ցնցող պատմութիւններ ու գաղանիքներ ունին իրենց մէջ. եւ սակայն դրեթէ ոչինչ կը նկատենք ու կը հասկնանք: Բայց ահա կու գայ ճշմարիտ արուեստագէտ մը եւ իր սուր, խորաթափանց հայեացքով կ'ընդգրկէ իրականութիւնը, վար կ'առնէ անոր վրայէն սովորական եւ նոյնիսկ ձանձրանալի բաներու վարագոյրը ու երեւան կը հանէ հետաքրքրական եւ յաճախ յափշտակող խորհուրդներ շօշափելի, մատչելի ձեւով, որուն շնորհիւ մենք արդէն կը տեսնենք ու կ'ըմբռնենք յստակօրէն այն, ինչ որ մինչ այդ մենք չէինք տեսած, թէեւ միշտ մեր աչքի առջեւ էինք ունեցած:

Նստակցական հակումները ու բարոյական առաքինութիւնները: Համաստեղի կերտած հոգիներուն մէջ թաքնուած են բարոյական կամ գեղասիրական ձգտումներ:

Իրենց ընտանեկան կամ ընկերային դիրքով Համաստեղի հերոսները կեանքի ամենաստորին ատիճաններու վրայ կը գտնուին դրեթէ միշտ, բայց իրենց հոգեկան թռիչքներով փարձր են իրենց չորջապատէն:

Այս բոլորին հետ եւ այս բոլորէն վեր է արուեստագէտի մը անհատականութիւնը զոր կը գնէ իր երկերուն մէջ: Ստեղծագործել կը նշանակէ իր հոգիէն կտոր մը վերցնել եւ գեղարուեստորէն մարմնաւորել զայն այս կամ այն արտաքին միջոցով: Նոյնիսկ այս պարագային երբ գեղարուեստագէտը իրեն նիւթ կ'ընտրէ հեռուոր առարկաներ, որոնք, ըստ երեւոյթին, անմիջական առնչութիւն չունին իր հոգիին հետ, այսուհանդերձ անոնք զգալիօրէն կը կրեն կերտողի անձնաւորութեան յատկանշական դրոշմը, իրենց ձեւով, ոճով, լուսարանութեամբ եւ շունչով:

Համաստեղի ստեղծագործութեան մէջ, հակառակ իր առարկայական նիւթին ու ձեւին շատ զօրաւոր շեշտ մը ունի ենթակայական ձեւը: Իր նկարագրած դէմքերն ու իրերը ոչ միայն իրրեւ տիպաներ հոգեպէս հարազատ են իրեն, այլ եւ հարազատօրէն կը ներկայացնեն իր աշխարհայեցողութիւնը: Որքան աւելի զօրեղ են անհատականութիւնն ու տաղանդը արուեստագէտին մէջ, այնքան աւելի յստակ եւ իւրայատուկ կերպով կը վերարտադրուին իրերն ու երեւոյթները անոր երկերուն մէջ:

... ամէն օր մենք անտարբերօրէն կ'անցնինք շատ սովորական թուող մարդոց եւ իրերու մօտէն, որոնք յուզիչ՝ յաճախ ցնցող պատմութիւններ ու գաղանիքներ ունին իրենց մէջ, եւ սակայն դրեթէ ոչինչ կը նկատենք ու կը հասկնանք: Համաստեղի պէս արուեստագէտներն են որ կու գան եւ կ'ընդգրկեն իրականութիւնը, վար կ'առնեն անոր վրայէն սովորական եւ նոյնիսկ ձանձրանալի բաներու վարագոյրը ու երեւան կը հանեն հետաքրքրական եւ յաճախ յափշտակող խորհուրդներ, մատչելի ձեւով մը, որուն շնորհիւ արդէն կը տեսնենք ու կ'ըմբռնենք յստակօրէն այն, ինչ որ մինչ այդ մենք չէինք տեսած, թէեւ միշտ մեր աչքի առջեւ էինք ունեցած:

Հ. Ե. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ԿՐԼԹԿԵԱՆ ԽՈՂԵՐ

Ե. - ՍԻՍ

Ինչ որ ես գիտեմ, ինչ որ ինձ ըսին,
Հին քաղաք մը կար ժայռերու կուրծքին.
Ըսին քէ Աստուած իջաւ երկնիցէն,
Ժայռերն հիմ դրբաւ, մաս մ'ալ իր սրտէն:

Զրգեց կապոյտներ կամարէ կամար,
Զաւի տեղ կախեց արեւներ անմար,
Ծըւէն մ'իւր փառքէն շինեց ծիածան
Եւ ինքը դրբաւ անունը «Սիսուան»:

— Ահա՛, ձեզ, ըսաւ, քաղաք արժուինի,
Թող վրբան յաւերժ արեւը ծագի.
Ծուխը ցնծութեան հասնի հեռուններ,
Եւ Սիսն ըլլայ միշտ սրտերու հրաւեր:

Եկան արժաններ ու պսակ դրբին.
Եկան բանակներ պարիսպ կազմեցին.
Աղջիկներ տաղով, պարերով ցնծուն
Անցան դաշտէ դաշտ՝ գերդ ծաղկած գարուն:

Ով երազ ունէր՝ դէպի Սիս կ'երթար,
Կարաւանն առջեւն, ուղտերով հագար.
Ոսկին կը ժպտէր նայումս քնքերու տակ,
Ինչպէս նախնայով փայփայումս վրտակ:

Դարպասն ոսկեղէն նստած քաղաքին
Ժրպիտ կը բաշխէր, գանձերն իր սրտին.
Արժան կը հսկէր սահմանն աշխարհին,
Արծիւներու հետ երկնիցէն անդին:

Կ'իջնէր տունէ տուն գիշերուան ոգին՝
Խաղաղ նինջ տալու անհոգ մանուկին.
Կ'իջնէր լուսնկան տանիքէ տանիք՝
Որ վիշտը չըտար սրտերուն ալիք: